նից ճշմարիտ շահուց, քան ինչ որ պի-տի ՁՆասէր ժամանակին ըրած աւեր-մունքներն։ Մենք հիմա այս կերպ կը խորհիմք, բայց պէտք չէ մոռանալ որ այն եկեղեցւոյն՝ Գողգոթայի վրայ բար-ձրանալու ժամանակ, քրիստոնէից մէջ շատ աւելի կարծեաց միութիւն և կրօնք կար քան ինչ որ հիմա։ Իրենց կրօնքը յետ երկար ժամանակ նշաւակ ըլլալու պատերազմաց և հալածանաց, Կոստան-դիանոսի դառնալովն վերջապէս յաղ-թանակ կանգնեց հեթանոս աշխարհին մոլորամիտ կրօնից վրայ։ Քրիստոնեայք մինչև այն ժամանակ գոհ եղած էին հեծելով միայն և ծածուկ հսկելով ի-րենց կրօնից խանձարուրք եղող տե-ղեաց վրայ. բայց երբոր կրցան ազատ և աներկիւղ պաշտել իրենց ճշմարիտ Աստուածը, շուտ մը մեծագործ յիշա-տակարաններով փառաւորեցին իրենց կրօնից խանձարրոց տեղը։

Կը շարունակուի։

ՀԱՑԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

(Տես երես 52։)

Կաթնտուք։

Արմ ընչերակին վրայ քեզի խօսած ատենս, խօսեցայ նաև ողնայարին վը-րայ որ իբր անոր պատսպարանն է, ուս-տի ալ քեզի անոր վրայ խօսելու չէի, որովհետև ձեռքդ կռնակդ տանելով հեշտեաւ կրնաս ըմբռնել թէ ինչ է։ Ողնայարի սիւնակը անանկ տիրող յատ-կութիւններէն մէկն է, որ այն ամեն կենդանիք որ զնոյնը կը կրեն՝ հարկաւ շատ մը նմանութեանց ալ տէր կ'ըլ-լան, ուստի և նոյնը իբր դասակարգու-թեան նշան ընտրած են առաջին մեծ խումբին։ Կանխաւ ըսելու եմ քեզի թէ այդ խումբերն չորս հատ են, չորս բա-նակախումբք, որոնց բնապատումք խրմ-բաւորութիւն անունը կու տան, և զա-նոնք չորս ճիւղերու կը նմանցնեն որ մի և նոյն բունէ ելլելով մէյմէկ կողմը կ'արձկուին։

Ուստի այսպէս նախ ողնաւորաց խմբաւորութիւնն ունինք։ Այդ անանկ անուն մըն է որ ինքնիրեն կը բացա-տրուի։

Մենք բնականապէս այդ խմբաւո-րութեանը կը վերաբերինք, որուն դա-դաթան պակն իսկ ենք. սակայն նոյնը նաև մեզմէ վար և շատ վար կը ձգի։ Կապիկէն, եղէն, հաւէն ու մողէսէն անցնելով, մինչև ցգորտ և ձուկ կը ձգի, որովհետև ողնայարը յատուկ է բոլոր այս արարածոց։ Թէ գորտ մը մե-զի հետ շատ նմանութիւն ունենայ՝ չե-րևնար, և սակայն ըստ որում ողնաւոր կենդանի՝ մեզի հետ նմանութեան կէ-տեր ունի, որոնց վրայ կ'ուժէ խօսիլ։ Առ հասարակ ամեն ողնաւոր կենդա-նիք գլուխ մը ունին, հանդերձ ըղեղով որ մարմնոյն ամեն դին իր հրամաններն կ'ուղարկէ. ամենը ներքին կմախք մ'ու-նին, որ է ըսել մէկմէկու յարեալ ոսկերց շարք մը, որ իբր հաստատուն հիմ մը կը ծառայեն, որուն վրայ կը յենուն բոլոր գործարանները. ամենը՝ չորս անդամ ունին, ըսել կ'ուզէի. սակայն օձը ան-դիէն դուրս կ'ելլէ ինչպէս թէ ուզեր աղդել ինձի որ ուշադիր ըլլամ և միան-գամայն ուզենար ծաղրաբանել մեր այս տղայական բաժանմանց կարգաւորու-թեան պիտոյքը, որոնց մէջ առհասա-րակ ամեն կենդանիք զետեղելու կը ջանանք։ Սակայն գոնէ ամենքը, առ հասարակ առանց բացառութեան սիրտ մ'ունին, հանդերձ իր ցանցակերպ ա-րիւնային անօթներովը. և կարմիր ա-րիւն մըն ալ կրկին կերպարանք, շընչ-երակային ու երակային. նաև ասկէ զատ ալ մարսողական խողովակ մը՝ որ դրեթէ մերինին պէս գործ կը կատա-րէ։ Այդ կէտին նկատմամբ չեմ պնդեր,

որովհետև ապա պիտոր տեսնես որ խմբաւորութիւններէն դուրս յատկութիւն մըն է այդ։ Նոյն իսկ բնոյն հիմնական յատկութիւնն է, որ 'ի հարկէ բոլոր խմբաւորութեանց մէջ կը յարատևէ, և ինչպէս քեզի առջի նամակիս մէջ զուրցեցի, ամեն դին գտնելու ես զնոյն։ Եւ քեզի իսկոյն գաղտնիքս զուրցել ուզելով, նոյն այն է այն առաջարկը որուն վրայ մեծ կերտողն իր բոլոր մտածութիւններն կերտեր է. և յինքն կը կայանայ կենդանական յատակագծին միութիւնը, այն գայթակղական միութիւնը որ այնչափ ամենամեծ գիտնոց բողոքներուն պատճառ եղաւ, և որ համոզուած եմ գլխովին, ինքնիրեն աչքիդ պիտոր ներկայանայ։ Սակայն այդ պատմութիւնը վերջը կը պահեմ քեզի, երբ ամեն բան տեսնես ու կարենաս դատաստան ընել։

Բոլոր ողնաւորները մէկէն քննել ուզելը, ինքզինքդ խառնակութեան մէջ նետել ըսել է։ Կարելի չէ այդ կերպով առաջին բաժանմունքէն սկսելով՝ յաջող ելք ունենալ։ Անոր համար ալ ասոնք հինգ դասու վերածեր են, որոնք ետևէ ետև պիտոր քննութեան առնունք, իսկ հիմա զանոնք անուանել միայն քեզի համար բաւական կը սեպեմ, այսպէս. կաթնտուք, թռչունք, սողունք, ձկունք և գորտնակաւանք։

Կաթնտուք մեր անմիջապէս մերձաւորներն են։ Ասոնք այն կենդանիք են որ կաթ տալու յատկութիւնն ունին, և անով կը կերակրեն իրենց ձագերն զորոնք և ողջ կը ծնանին։ Դու ալ կաթնտուաց դասէն ես, որովհետև պըզտիկուց կաթով սկսեր ես սնանիլ։

Ինչ որ ետքի անգամուն ձիուն նկատմամբ զուրցեցի քեզի, քիչ տարբերութեամբ բոլոր կաթնտուաց կը յարմարի։ Ուստի հետևաբար հոս տեղս մեծ տարբերութիւններ դիտելու չունինք։ Հանդերձ այսու որովհետև ասոնք մեզի աւելի հետաքրքրական կենդանիք են, ըստ որում մերձաւորագոյն ազգականք, ստոյգն ըսել ուզելով, և որովհետև անոնց հետ է որ ընդհանրապէս աւելի յարաբերութիւն ունինք, հիմա աչքէ անցնենք այն այլևայլ կարգերն որոնցմէ կը բաղկանայ իրենց դասը։ Հարկ է ըսել քեզի թէ դասերն կը բաժնուին 'ի կարգս, կարգերն 'ի ցեղս, ցեղերն 'ի սեռս, սեռերն 'ի տեսակս, ինչպէս բանակի մը մէջ ալ բաժինք կ'որոշուին 'ի գունդս, գունդերն 'ի վաշտս, և այլն։ Հոս ալ նմանապէս որովհետև իրարու միտքը հասկնալու համար հարկ էր անուններ որոշել, այս անուններն ընտրեր են։

Ա. Երկձեռնիք։

Հապա յառաջ անցնինք։ Երկայն ատենէ 'ի վեր է որ ատոնց վրայ կը խօսինք։ Երկձեռնիք մենք ենք, որովհետև երկու ձեռք ունինք։ Այո՛, սիրելիդ, այդպիսի անուն մըն է որ մեզի տուեր են անպատկառք ոմանք, փոխանակ մարդ գեղեցիկ անունը մեզի թողլու։ Եւ այդ շատ դիւրին էր, որովհետև մենք բոլոր կարգին մէջէն մի միայն ցեղ, մի միայն սեռ և մի միայն տեսակն ենք, և ըստ իրաւանց։ Երկաթուղեաց կառատորմներուն մէջ պատուաւոր անձանց մասնաւոր պատիւ մը կ'ընեն, առանձին բաժանմունք մը միայն անոնց դիւրութեանը չնորհելով։ Մեզի վայել էր առանձին կարգ մը միայն մեզի համար որոշել. և այս՝ ազգապետութեան հետ բոլորովին մի և նոյն չէ։ Միով բանիւ դու երկձեռնի մըն ես. հարկ է իրաւունքդ պաշտպանես։

Բ. Քառաձեռնիք։

Ասոնք, ինչպէս իրենց անունէն կ'իմացուի, չորս ձեռք ունին, երկուքը թևերնուն ծայրը, միւս երկուքն ալ՝ տրունից ծայրը. այսպիսիք են կապիկներն։ Ասոնց վրայ ըսելու բան մը չկայ. նմանութիւնը կատարեալ է։ Սակայն կը խաբուիմ. գրեթէ ոչինչ մըն է, նըմանութեան մը սկիզբը։ Շնատամունք

յառաջադէմ, միւս ատամներէն աւելի երկայն են. մէկ քանի տեսակք ալ, օրինակի համար, կենդանք՝ իրենց այտից ներքևը պզտի քսակներ ունին, որ բերնին մէջ կը բացուին, որոնց մէջ ապա կեղևելի ընկուզները կը պահեն։

Պզտի մէկ բան մըն է այդ, տարակոյս չկայ, սակայն օրինակ մըն է թէ բնութիւնը ինչպիսի հաճոյից հետևեր է կենդանեաց մարմնոյն կազմութեանը մէջ։ Ոմանց վրայ կը տեսնես որ պզտի բան մը կ'աւելցնէ, մինչդեռ այլոցմէ ուրիշ բան մը կը պակսեցնէ։ Երբեմն ալ գործարան մը երկնցնելով, միայն գոհ կ'ըլլայ, ինչպէս կապկաց շնատամունքը, այլ երբեմն ալ նոյն գործարանը ամենափոքր կ'ընէ. կամ թէ չէ ոմանց վրայ աւելի պարզ կ'ընէ, այլոց վրայ աւելի խառնակ. բայց և այնպէս միշտ մի և նոյն գործարանն է։ Մի և նոյն բանը կ'ընեն նաև դերձակուհիք թեղանեաց նկատմամբ. բաց, գոց, տափակ, ուռեցուցած, միացուցած, զարդարուն, և այլն, այդ ամենը թեղանիքէ դուրս ուրիշ բան մը չեն ձևացներ։

Գ. Մաշկաթևք։

Շատ կ'ամչնամ, պզտիկ դու, այդ անունը քեզի զուրցելով. որովհետև մեր գիտնոց քմայ հաճոյք մըն է այդպիսի անունով ջղիկները կոչել, որպէս զի ռամիկ անուանակոչութենէն խոտորին։ Մաշկաթևք այն կենդանիք են որ ձեռքերնուն մէջ թև մ'ունին։ Եւ յիրաւի, ջղկան վերին անդամոց մատուները, երկրննալով չափէ դուրս մէկմէկէ կը հեռանան, ու մէկմէկու հետ նուրբ մաշկով մը միացած են, որ փորուն հետ յարեալ է. կենդանին անով, ինչպէս թէ թև մը ըլլար, օդը կը զարնէ ու կը թռչի, անանկ որ շատ մարդիկ խաբուելով թռչուն կը կարծեն զինքը։

Արդ այդ պզտի կենդանին փոխանակ թռչուն ըլլալու մեր բոլոր ներքին կազմութիւնն ունի, և առանց երևցնելու այնպէս նմանն ու մերձաւոր է մեզի, որ գիտուն մը, և շատ հռչակաւոր գիտուն, զինքը կենդանական ազգին առաջին ցեղին մէջ կրցեր է կարգելու, կապիկին, և ամենևին չկարծածիդ, մարդուս հետ միացնելով։ Այդ ջղիկն, ինչպէս մարդ ու կապիկ, կրծող վրայ ատինք կը կրէ, և այդ յատկութիւնն էր ճշդիւ որ Լինէոս, արուեստական ոճին մարդը, ընտրեր էր, իր առաջին ցեղին զանազանիչ յատկութիւնը ձևացընելու համար։ Ճշմարիտ է որ 'ի պատիւ երեսաց մերոց աւելի պոռոտաբան անուն մը տուեր էր անոր, քան ինչ որ չէ մեր արդի անունը. գերաբուռնք, կոչեր էր զանոնք, որ առաջինք, իշխանք կը նշանակէր։ Սակայն մենք հաւասարապէս զայդ ընդ ջղկանց իշխանք էինք. անոր համար լաւագոյն կ'ընտրեմ երկձեռնի և առանձին ըլլալ։ Ցիրաւի կարծեմ որ այդ յանդուգն ջղիկը իր բուն տեղը դնելու համար է որ, բնական դասակարգութեան մեծ այլայլութեան ժամանակը, տնկաբանական պարտէզը նստող գիտնոց ժողովը՝ ատոր այն մաշկաթև տգեղ անունը դրեր է 'ի պատուհաս, ամօթալի կերպով զինքը գերաբնից ջնջուած իշխանութենէն դուրս մերժելով։

Ինծի անախորժ չէր, այդ դասակարգութեանց պատմութեան պզտի դէպքը անցողաբար քեզի սորվեցնելու. սակայն միւս կողմանէ այդ մեծութենէ ինկած իշխանուհւոյն մարսողական կազմարանին վրայ ատոյգ է որ մանաւոր բան մը ըսելիք չունիմ, և այս բանս գեղեցիկ վկայական մըն է մերինին հետ ունեցած նմանութեանը։ Միայն ատամնոց նկատմամբ քեզի ամենապզտի տեղեկութիւն մը կ'ուզեմ տալ։ Մեր աշխարհին ջղիկները, որովհետև շատ տեսակ ջղկունք կան, միջատներով կ'ապրին, զորոնք գիշերը թռչելու ատենին կը բռնեն։ Այդ միջատներուն մարմինը շատ անդամ ամենակարծր պատեանով մը պատած է, անանկ որ մեր աղօրիք ատամանց նման ակռաներ մեծ դժուարութեամբ կրնային զանոնք

ըստ պատշաճի մանրել. անոր համար ալ այս պզտի կենդանւոյն աղօրիք ա-կռաները պզտի կոնաւոր ծայրերով ցցուած են, որ զանոնք մանրելով ա-մենաոչինչ փշուրներ կը փոխեն։ Ամե-րիկա մեծ ջղիկ մը կայ, վամբիր ա-նուամբ, որ կենդանեաց արեամբը կ'ա-պրի, և բնութիւնը զինքը այս բանիս համար ըստ պատշաճի զինած է։ Իր ցռուկը թռչնոյ մը կտուցքին նման կը բարակնայ, և ծայրը անանկ հերձատա-մունք ունի՝ որ բժշկի մը նշտարակին պէս սուր են։ Վամբիրն որ նաև գիշերը կը թռչի, քնացող մեծ կենդանեաց վը-րայ կը յարձրկի, և առանց զանոնք ար-թընցնելու, փափուկ կերպով վզին վրայ երակ մը կը բանայ, և առատաբար անոնց արիւնը կը ծծէ, թևերովը զգուշութիւն զանոնք հովահարելով, որպէս զի զո-վացնելով անոյշ քնոյ մէջ բռնէ։ Ինչ-պէս կը տեսնես, չար կենդանի մը չէ. ըրած խայթուածքը տզրուկի մը խայ-թուածքին չափ է. սակայն կենդանին անկէ կը մեռնի։ Ասկէ գեղեցիկ նմա-նութիւն մը չեմ գիտեր շողոքորթին, որ զքեզ հովահարելով հոգիդ կը ծծէ։ Եւ որովհետև մէյ մը խօսք ըրինք, դի-տէ այս՝ որ այդ տեսակ արարած միշտ իշխանաց քովը սպրդելու ճարպկու-թիւնն ունեցեր է։

Դ. Մսակերք։

Գոնեա ահա անուն մը որ մեկնութիւն կարօտ չէ։ Ասոր տակը կ'երթան արջե-րուն, գայլերուն, աղուեսներուն, աքիս-ներուն, շանց, կատուաց, վագեր, ա-ռիւծուց և բոլոր այն կենդանեաց ցե-ղը, որ ցռուկնին արեամբ կը թաթա-խեն, և միսները ուտելով կ'ապրին։ Ասոնք ալ նմանապէս մեզի նման մի և նոյն սննդական կազմարանն ունին, արջը գլխաւորապէս՝ որ զոյդ ընդ կապ-կի, մարդուս աւելի մօտ եղող կենդա-նին է, որովհետև մեր ոտքերուն նմանն ունի, ինչպէս կապիկն ալ մեր ձեռաց նմաններն, և պոչ ալ գրեթէ ամենևին չունի, լռելով ուրիշ բաներ։ Արջն ալ մեզի նման ամենակեր է, այսինքն թէ ամեն բան կ'ուտէ, բանջարեղէն ու պտղեղէն, ինչպէս նաև մսեղէն, և բնու-թիւնն որ զինքը մեր կերածն ուտելու տրամադրած է, նաև գրեթէ մերիններ-ուն նման աղօրիք ակռաներ ալ անոր տուած է։ Միայն անոր շնատամունքն են որ կը տարբերին. քան զքառաձեռ-նից շնատամունքն աւելի ցցուած են, ինչպէս նաև նոյն այս կարգին ամեն անդամոց շնատամունքն ալ, որ իրը բուն դաշոյնք կը ծառայեն։ Սակայն ասոր եղբայրակիցքն որ պարզաբար մը-սակերք են, իրենց յատուկ մասնաւոր տեսակ աղօրիք ալ ունին։ Առիւծն, օրինակի համար, որ արջու նման ըս-տեպղին ուտելու ախորժ չունի, և որ մեղրին ու խաղողոյ քով, որ միւսին մէկ հատիկ ախորժած բանն են, անօ-թութենէն կը մեռնէր, առիւծն որ ա-կռաներուն մէջ միայն միս կը ծամէ, հատու թիթեղներով ցցուած աղօրիք-ներ ունի, որ միսը մանրելու որոշեալ են, նման այն մեծ դանակներուն որ խոհակերք միսը կտրտելու մանրելու կը գործածեն։

Առիւծը ուրիշ մէկ մասնաւորութիւն մըն ալ ունի որ նմանապէս միւս մսա-կերաց ալ հասարակ է։ Մատդ ական-ջիդ ստորին ծայրի տեղը հանդչեցուր, ու ծամելիքդ շարժէ. կարծը բան մը կը զգաս որ մատիդ տակէն երթևեկ շարժ-մամբ կը խաղայ. այն տեղուանքն է որ ստորին ծամելիքը գանկին ոսկրի մը մէջ կու գայ կ'ագուցուի, որուն անու-նը եթէ գիտնալ կ'ուզես քնքայինն է կամ քնքաց ոսկրը։ Ծամելիքին ծայրը կլորելով պզտի կեռ մը կը ձևացնէ, զոր զոդ կը կոչեն, և քնքաց ոսկրին խորշի մը մէջ կը խոթուի։ Ի մեզ այդ խորշը անանկ սաստիկ խոր չէ, և ոչ կեռն իսկ շատ երկայն, անանկ որ կրնայ շատ ա-զատաբար խաղալ, և ասոր պատճա-ռաւ է որ մենք մեր ծնօտին կրնանք դէպ 'ի ետևէն առջև երկրորդական շարժմունք մը տալ, որուն վրայ ուրիշ անդամ խօսեր եմ քեզի, և որուն պատ-

ճառաւ մեր պղտի երկանները հայի պա-
տառները խիւս կը դարձնեն։ Սակայն
այդ ազատ խաղն ալ իր անպատշաճու-
թիւններն ունի։ Զըլլայ թէ երբեք յան-
դգնիս բերնիդ մէջ մէկ անգամով խոշ-
շոր առարկայ մը դնելու, ինչպէս խնձոր
մը օրինակի համար։ Ընելու ճգամիդ
կրնայ ըլլալ որ զոդը իր այն պղտի ծա-
կին մէջէն, ուր հազիւ թէ կիսով չափ
արգիլեալ է, ելելով քնքաց ոսկրին
տակը սահի. և դու այնուհետև բերանդ
գոցելու անկարող, այնպէս կը մնաս
մինչև որ բժիշկը հասնի։ Առիւծը, ո-
րուն շատակեր որկորը փառն մը պէս
կը բացուի, այնպէս որ գաղան զսպե-
լու զբաղանքն ունեցողք առանց դժուա-
րութիւն մը կրելու ամբողջ գլուխնին
մէջը կը խոթեն, որ խնձորէ մը բոլորո-
վին տարբեր բան է, առիւծն, ըսեմ որ
բժիշկ չունի, շատ անգամ այդպիսի ան-
դարմանելի վտանգի ենթակայ կ'ըլլար,
եթէ բնութիւնը այդ բանին ճարը տե-
սած չըլլար։ Որպէս զի աւելի ամրու-
թիւն մը տայ անոր, ետևէն դէպ 'ի
առջև շարժմունքը զանց ըրեր է, զօ-
ղերը աղէկ մը խորշին մէջ մխելով, ուր
անանկ սղմուած են, որ միայն վերէն
վար կրնան շարժիլ, ինչպէս ագցանի
մը թեները։ Պղտի անպատեհութիւն մըն
է որ կը ներէ ծամելիքին անվտանգ
կերպով այնչափ բացուելու որչափ իր
ահեղ տիրոջը բուռն մղումը զինքը կը
բռնադատէ։ Կը տեսնես որ նուազ ա-
զատութիւն մըն է աւելի ուժ ստանա-
լու համար, որ և դեռ ևս ընդունելի
պայման մըն է, երբ անոր տէրը առիւ-
ծու արուեստին հետևող է։

Հոս դիտողութիւն մ'ունիմ քեզի ը-
նել տալու։ Ահա կենդանեաց երեք
կարգեր, մերինէն սկսեալ որ առջևէդ
կ'անցնին, և տակաւին գրեթէ ուրիշ
տարբերութիւն մը չկրցանք նշանակել՝
բայց եթէ ծնօտին զօդերուն և ատա-
մանց նկատմամբ։ Քեզի կ'իմացնեմ որ
մինչև կաթնտուաց դասուն վերջը մի և
նոյն բանն ըլլալու է ամենուն նկատ-
մամբ։ Ասոնց սննդական կազմարանին
էապէս շարժուն ու փոփոխական կէտն
ատոնց վրայ կը կայանայ։ Ծնօտն և ա-
նոր զինուածքը, ըստ սննդեան տեսա-
կին՝ կենդանեաց տեսակէ տեսակ կը
փոփոխի. սակայն այդ փոփոխութիւն-
ներն ալ սովորաբար հոն գաւթին մէջ
կանգ կ'առնուն։ Ցանը ներքին կարգա-
ւորութիւնը գրեթէ ամեն դին մի և նոյն
կը մնայ։

Սակայն հոս ներքին տարբերութիւն
մը ունինք նշանակելու, ոչ թէ մասանց
բաժանմանը նկատմամբ, հապա միայն
մեծութեան կողմանէ։ Ստամոքսը, հա-
մեմատաբար, աւելի պղտիկ է, և քան
զմերն աւելի տկար. մարսողական խո-
ղովակն ալ երկու անգամէն աւելի պըզ-
տիկ։ Միջակ հասակի մարդու մը մար-
սողական խողովակը, գրեթէ մարմնոյն
եօթը երկայնութիւնն ունի. առիւծինը
ընդհակառակն մարմնոյն միայն երեք
երկայնութիւնն ունի. և այս իր սնը-
դեան տեսակին բնական հետևանք մըն
է։ Միսը և արիւնը որոնցմով բացար-
ձակապէս կը սնանի, իր որսերուն մար-
մնոյն մէջ կանխաւ պատրաստած ու
խտացած բնասպիտակուց է. որով շատ
աշխատութեան պէտք չկայ անով ա-
ռիւծի արիւն շինել։ Տարբաբանութեամբ
վարժապետ մը որ քաջ պատրաստող
մը ունի, շատ մեծ գործանոցի մը պէտք
չունի։ Այս բանս առիւծին պատշաճ է,
և բնութիւնն իսկ որ ամենեին անօ-
գուտ բան մը չըներ, տեղւոյ խնայութիւն
ըրեր է։ Այդ անտառաց արքայն ընտե-
լացուր և անոր սննդառութեան տե-
սակը փոխէ. ինչ բան կ'ուզես գրաւա-
դիր կ'ըլլամ, որ շատ մը ծննդոց յաջող-
դութենէ ետև նաև անոր մարսողական
խողովակն ալ աւելի պիտոր երկրննայ։
Թող դիտեն կատուին ներքինքը. որ
առիւծին պղտի եղբօրորդին է, ըստ ո-
րում մի և նոյն սկզբնական ծագմամբ
յառաջ եկած. միայն որդւոցմէ որդի
ամեն առտու անոր կերուցած կաթն
ու սուրճը նկատելով, վստահ եմ որ ա-
նոր մարսողական խողովակը մարմնոյն
երեք երկայնութենէն աւելի կը չափէ։

Հարկ է իսկզբան այս նիւթիս նկատ-
մամբ, կենդանեաց գործարանակազ-

մութեան վերաբերեալ ամենակարևոր բան մը գիտնաս, անանկ բան մը որուն պատճառաւ շատ ստոր կ'իյնան քան զերկնեռնիս, որովհետև երկնեռնիք կան ինչպէս տեսանք։ Աստուած իմացականութիւնն ու գործոյ ազատութիւնը մարդուս տալով, նաև այս անլուր ձիրքն ալ տուաւ իրեն, որ իր հետոցը վրայ աշխատի, եթէ կրնամ միտքս այսպէս բացատրել. և իրմէն ետքը ինքն ալ կարենայ հպիլ ստեղծական գործոց, ճշդիւ այնպէս ինչպէս իր ձեռքէն ելեր էին. ըսել կ'ուզեմ որ կերպով մը ենթաստեղծիչ մը ըլլար է զինքը։ Հիմա մասնաւորապէս որ կենաց օրէնքներն աւելի յստակ կերպով կը սկսի ըմբռնել, մարդս աւելի ուղղակի կերպով ձեռք բերեր է այդ ստեղծական գործը զոր Աստուծոյ մեծանձնութիւնը շնորհեր է իրեն։ Դու հիմա կրնաս Անդղիա չափ մը տալով, ինչպէս թէ զրահի մը համար ընէիր, եզ մը կամ ոչխար մը շինել տալ։ Մէկ քանի տարիէ, եթէ անկարելի բան մը չես ուզած, քու յանձնարարութիւնդ ոչինչ տարբերութեամբ ձեռքդ կը հասցնեն։ Այս բանս մնակերաց հետ վերաբերութիւն մը չունի յիրաւի. սակայն չէի ուզեր կաթընտու դու, հոս վրադ խօսելէն դադարելով, այդպիսի յոռի անուան մը տպաւորութիւնը վրադ թողուլ։ Հարկ էր նաև քու մեծութեանդ իրազեկ ընէի դքեզ։

Կը շարունակուի։

ՍԿԻԶԲՆ ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

(Տես երես 57։) — Շարունակութիւն և վերջ։

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՕՐ

Յայսմ աւուր յիշատակ է՝ Է աւուր հանգստեանն Աստուծոյ։ Յետ վեց աւուրց արարչութեանն՝ յաւուր շաբաթու՝ գործ ինչ ոչ գործեաց արարիչն, այլ հանդեաւ յառաջ գործեցեալսն. քանզի զամենայն զոր ինչ արար Աստուած, ետես և ահա բարի են յոյժ։ Վասն որոյ օրհնեաց զօրն եօթներորդ՝ և սրբեաց զնա. զի 'ի նմա հանդեաւ՝ յամենայն գործոցն զոր արար։ Զայլ աւուրսն պատուեաց Աստուած արարչութեամբն, և զսա օրհնութեամբ և սրբութեամբ. և եդ զօրէնս երրայական տոհմին՝ զվեց աւուրս գործել նմանապէս Աստուծոյ զմարմնական պէտս, և յաւուր շաբաթի հանգչել ծառայիւք՝ և անասնօք. և տեսանել իւրաքանչիւր զգործս իւր թէ սխալեալ լինի զայն վեց օրն, նա քաւեսցեն զայն մեղսն՝ խոստովանութիւբ և տրոք ողորմութիւ։ Եւ նշանակէ Է օրս Է դարու կենցաղոյս, յորս աշխատին մարդիկ ծննդեամբ և սնընդեամբ հարկաւորպիտոյիւք և մահուամբ։ Եւ յութ դարուն հանգչին յարքայութիւնն երկնից, թէ արարեալ են 'ի վաստակս իւրեանց գործս բարութիւ։ Իսկ մեր քրիստոնէիցս օրէնք եդան 'ի սուրբ առաքելոցն, զամենայն շաբաթս վաստակել 'ի գործս, և յաւուր կիրակէի հանգչել յաշխատանաց։ Եւ զի Հրէայքն յաւուր շաբաթու զօրէնս և զմարգարէսն ընթեռնուին, և վարդապետքն մեկնէին, այսպէս և քրիստոնէիցն պարտ է առնել. և յաւուր կիրակէի յեկեղեցւոյ ոչ հեռանալ, այլ խոստովանիլ, և հաղորդիլ, և լսել զբանս աստուածային գրոց, և ակն ունել գալստեանն Քրիստոսի յաւուր կիրակէի։ Եւ գիտելի է, զի իւր մահն ամենայն մարդոյ՝ Աստուծոյ գալուստ է։ Վասն որոյ և ինքն ասէ Քրիստոս. թէ յամենայն ժամ արթուն կացէք. զի ոչ գիտէք թէ, Երբ տէր տանն գայցէ. յերեկօրեայ, որ է ծերութիւնն. 'ի մէջ գիշերի, որ է երիտասարդութիւնն. 'ի հաւախօսի, որ է մանկութիւնն. ընդ առաւօտն, որ է տղայութիւնն. գուցէ եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ 'ի քուն. այսինքն, անպատրաստ ըստ աշխարհիս։ Եւ զի շաբաթն հանդիստ թարգմանի. որպէս և գրեալ է թէ՝ հանդեաւ Աստուած յաւուրն եօթներորդի։ Թէ վասն առաջին